Ժ Ա.

Պիտէր կաթ մի յայն գինուն որ խըմեց Ենովք ’ւ Եղիա,
Խըմեց Տէր Գրիգորն Հայոց, ասաց թէ՝ Հանգայ:
Հայե՛ր, ա՛մ, դուք է՞ր կուլայք, գիտէք որ ձեր Տէրըն տի գայ.
Շատոնց մըթան լոյս արեր, կու վախէք թէ ձերն ուշանա՞յ:

Ժ Բ.

Կանչեմ հոտ ի վեր, Ստեղծօց, զամենայն ղարիպ դու պահէ՛,
Իմ եարն ի ղարիպութիւն, իր կըրա՛կըն զինս կու երէ.
Զիր գալն ինձ շուտով արէ՛, զիմ ամէն տէրտըս նա գիտէ.
Զերեսս երեսին դընեմ որ հոգիս ի ծոցն ելանէ:

Ժ Գ.

Խօշ եա՛ր, քեզ լալով սէրա՛մ, ես ի քո քաղքէն կու գընամ.
Բե՛ր պագնեմ զաչերդ ուներդ, երբ երթամ՝ չիկարօտանամ:
Յայս աստուածաշէն ծոցէդ, երեսէդ՝ մահրում կու մընամ.
Բացուեր ես ի վարդ նըման, ես պըլպուլ ի դէմ քեզ կուլամ:
Մարդ չեղնամ թ’էլ եար սիրեմ կամ ըզքո սէրըն մոռանամ,
Կամ զքո անուշիկ պագիկն թէ սրտէս հանեմ ուրանամ:
Թէ նուշ թէ շաքար ուտեմ, առանց քեզ՝ իմ հալն է հարամ:
Ապրեր եմ քըսան տարի ու շարեր հազար տարոյ ղամ:
Ի՞նչ շահ է իմ շատ ապրիլն, որ առանց սիրուդ կու մընամ:
Ես ու դուն, հոգեկս, ես ու դուն, ես ու դուն՝ մէ՛կ տօշկեկ ի քուն.
Ես ու դուն, աչկո՛ւնք, ես ու դուն, ես ու դուն՝ օթվա՛ն սարերուն:
Զէտ ասա՛, հոգե՛կ, զէտ ասա՛, զաչքդ ուտե՛մ՝ զուներդ ի վըրայ:

Ժ Դ.

Հա՛յ իմ ննըման նըման, մայրըն չէ բերեր քեզ նըման.
Այդ քո ըռանայ մազերդ որ առեր վըզիդ մանէման,
Քաշէ՛ փունջ մ’ինձ տուր նըշան, ես օտար երկիր կու գընամ.
Քանի դուն իմ միտքս անկնիս, երեսիդ դընեմ քեզ փոխան:

Ժ Ե.

Ուսկայ կու գընամ, խօ՛շ եար, արե՛կ զիմ ճամբեկըն օրհնէ՛.
Տարեկ մի օֆա պահէ՞, զերեսիկդ ի մարդոյ ծածկէ՛.
Թէ գամ նա տուան արա, թէ չըգամ նա դու սեւ ներկէ.
Հազա՛ր ամանաթ, հո՛գի, յետեւ ինձ ըզսէրըն թարկէ՛: